ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/37 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու
Արմեն Գևորգյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության պետի տեղակալ.
Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ
Գարիկ Բոյաջյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.
Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.
Անդամներ՝ ԳՊ/ԲԱ – բացող անձնակազմ
Արմենուհի Մկոյան՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ.
Վարդգես Դադոյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ.
Հանձնաժողովի քարտուղար՝
Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա, ժամի մասին
1.1 Վառելիքի ձեռքբերման նպատակով ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/37 ծածկագրով ընթացակարգի հրավերը Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ս.թ. հունիսի 6-ին հրապարակվել է գնումների էլեկտրոնային համակարգում՝ www.armeps.am կայքում և գնումների պաշտոնական տեղեկագրում:
Ընթացակարգը հայտարարվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու պայմանով:
1.2 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են էլեկտրոնային եղանակով 13.06.2019թ., ժամը 10.00-ին:
1.3 ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/37 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նախագահը հայտարարեց ձեռքբերվող ծառայության նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված:

1.4 Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

N	Մասնակցի անվանումը	Հասցեն, էլ. փոստը
1	«ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ կոնսորցիում	Ք. Երևան, Պուշկինի 1, tender@cps.am, tendercps@gmail.com
2	«ՖԼԵՇ» ՍՊԸ	Ք. Երևան, Եզնիկ Կողբացու փող., 30 շենք, flashltdtender@gmail.com

2. Տվյալներ՝ հայտերը կազմելու, ներկայացնելու, սահմանված կարգի պահանջներին համապատասխանության և բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին
2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան,
2.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3. Նախահաշվային գները, մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Հ/հ	գնման առարկայի անվանումը	մասնակիցներ	նախահաշ-վային գին	գնային առաջարկները		
				առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհ. գինը
1	Բենզին ռեգուլյար	«ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ կոնսորցիում	7 380 000	6 150 000	1 230 000	7 380 000
		«ՖԼԵՇ» ՍՊԸ		6 225 000	1 245 000	7 470 000

4. Հանձնաժողովը որոշեց.

4.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությամբ՝ նիստը կասեցնել երկու աշխատանքային օրով մինչև ս.թ. հունիսի 18-ը, ժամը 12.00-ը և «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ կոնսորցիումը և «ՖԼԵԾ» ՍՊ ընկերությանը հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների: Բանակցությունների նիստը տեղի կունենա ս.թ. հունիսի 18-ին ժամը 14.00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

18.06.2019թ.

5. Ընդունել ի գիտություն.

Մասնակիցները բանակցություններին չեն մասնակցել. գնային առաջարկներ չեն վերանայվել:

6. Հանձնաժողովը որոշեց.

6.1 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ և «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ կոնսորցիումը 1-ին չափաբաժնով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից.

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

6.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

6.3 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցել՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

6.4 ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/37 ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 46-րդ կետով սահմանված ժամկետում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Գևորգյան

անդամներ՝ _____ Գ. Բոյաջյան

_____ Ա. Մկոյան

_____ Վ. Դադոյան

_____ Հ. Ծատուրյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան